ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԴԱՊ-ՊԸԾՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

ք.Դիլիջան
Մասնակցում էին

16 օգոստոսի 2016թ.
ժամը 10 ^{00}

Հանձնաժողովի նախագահ՝
Հ.Հարությունյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ**

Հանձնաժողովի անդամներ՝
Լ.Աբազյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի իրավաբան**
Ռ. Ալիխանյան — **կադաստրի վարման և մոնիթորինգի մասնագետ**
Ռ. Հարությունյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահեստապետ-պարետ**

Հանձնաժողովի քարտուղար՝
Ա. Դիլանյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գնումների մասնագետ-տնտեսագետ**

1. **«ԴԱՊ-ՊԸԾՁԲ-16/01»** **ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման նիստի.**
(Հ. Հարությունյան)

Հաշվի առնելով «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից գեոդեզիական-քարտեզագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԱՊ-ՊԸԾՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, ինչպես նաև այն հանգամանքը, որ 11.08.2016թ.-ին հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ նշված ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Տեղանք» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ և ՀՀ կառավարության 10.02.2011թ. 168-Ն որոշման հավելված 1-ի 48-րդ կետով սահմանված ժամետում ՀՀ ՖՆ ՏՏԵՆՀ վարչությունից 15.08.2016թ. դրական եզրակացություն է ստացվել: Համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. 168Ն որոշման հավելված 1-ի 48-րդ կետի, «Տեղանք» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տվյալները համարվում են իրականությանը համապատասխանող: Սակայն բացակայում են հրավերով նախատեսված տեխնիկական միջոցների տեխնիկական անձնագրերի պատճենները:

2. **Հանձնաժողովը որոշեց՝**

2.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 51-րդ կետը ծանուցել «Տեղանք» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

2.2 Հանձնաժողովի նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. **Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:**

Հանձնաժողովի նախագահ՝

Հ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝

Լ.Աբազյան

Ռ. Ալիխանյան

Ռ. Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Դիլանյան